

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ 1918 թ. ՎԵՐՁԵՐԻՆ  
ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹ-  
ՅԱՆ ԳՈՐԾՈՒԵՇՈՒԹՅՈՒՆԸ\*

### Արտակ Ղազարյան

Անկախացումից հետո Հայաստանի առաջին հանրապետությունը միայնակ մնաց իր ներքին դժվարին խնդիրների հետ, որոնք նոր կազմավորված հանրապետության համար անելանելի վիճակ էին ստեղծել: Այդ դժվարին խնդիրները հաղթահարելու համար անհրաժեշտ էր միավորել բոլոր ջանքերը և ուղիներ որոնել վերջնական կործա-նումից երկիրը փրկելու համար:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության առջև դրված էին բազմաթիվ ծան-րակշիռ, ճակատագրական հարցեր, բայց այդ հարցերից գուցե ոչ մեկը այնքան հեր-թական, այնքան անհետաձգելի չէր, որքան գաղթականական ու պարենավորման խնդիրներն էին: Մի երկիր, որից կտրված էին նրա բոլոր հացարաւ վայրերը, մի եր-կիր, որ ինքը, քաղցած լինելով, կերակրում էր կես միլիոնի հասնող գաղթականների հոկայական բանակ, անկարող կլիներ երկար դիմանալ և վաղ թե ուշ սովոն ու հիվան-դությունները կավեճին իրենց առատ հունձը [1]:

Նոր անկախություն ձեռք բերած երկիրն ամբողջովին լցված էր գաղթականնե-րով, պարենի սուր ճգնաժամ էր երկրում: Այս պայմաններում Հայաստանի առաջին հանրապետությունը երկար դիմանալ չէր կարող և անհրաժեշտ էր շուտափույթ ելք գոնել ստեղծված իրավիճակից: Այս ամենին գումարվում էր նաև Վրաստանում ապ-րող հայերին օգնության հասնելու հարցը: Բամն այն է, որ Ախալքալաքի շրջանի հայե-րը թուրքերի արշավանքի պատճառով գաղթել էին իրենց բնակավայրերից և պատս-պար-վել Ծալկայի ու Բակուրիանի շրջաններում, որտեղ, ինչպես կտեսնենք մեր հե-տագա շարադրանքից, նորմալ պայմաններ չկային մարդու գոյատևման համար: Ուս-տի պետք է ասել, որ պարենի, հիվանդությունների, կողոպուտի ու բաց երկնքի տակ ապրելու պատճառով գաղթականները դատապարված էին մահվան:

Օսմանյան գորքերի կողմից գրաված վայրերից հեռացել էին ավելին քան 500 հա-զար կովկասահայեր. Բարումի շրջանից՝ մոտ 20.000, Կարսից՝ 120.000, Ախալցխայից՝ մոտ 30.000, Ախալքալաքից՝ 80.000, Ալեքսանդրապոլի գավառից՝ 60.000, Էջմիածնի և Սուլմալուի գավառներից մոտ 80.000, Երևանի, Շարուրի և Նախիջևանի գավառնե-րից՝ մոտ 100.000[2]:

Ախալքալաքի բնակչության վիճակը խիստ ծանրացավ այն ժամանակ, երբ 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին Վեհիր փաշայի գորքերը հարձակվեցին և գրավեցին Կարսի մարզը[3]: Անդրկովկասյան Սեյմը, որն այդ ժամանակ ծանր օրեր էր ապրում, ոչ մի շոշափելի քայլ չկարողացավ կատարել և ավելին՝ Սեյմում հեգեմոն դեր խաղա-ցող վրաց մենշևիկների ջանքերով, որոնց ծայնակցեցին թաթարական ներկայացուցիչ-ները, անկամեցողություն դրսերվեց գործնական ռազմաքաղաքական պատրաս-

\*Հոդվածն ընդունվել է 01.10.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Վ.Վիրաբյանը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

տուրքումներ ձեռնար-կել՝ թուրքական ներխուժումն Ախալքալաք կանխելու ուղղությամբ[4]:

Հայտնվելով օրիսական դրույթան մեջ՝ Ախալքալաքի բնակչությունը բռնեց գաղթի և փախուստի ճանապարհը, որը ստեղծված իրավիճակում միակ ելքն էր: Նրանք հույս ունեին այս կերպ ապահովել իրենց ընտանիքների անվտանգությունը, սակայն, ինչպես պարզվեց հետագայում, Բակուրիանին ու Շալկան այդքան էլ «ապահով» վայրեր չեն գաղթականների համար:

Ախալքալաքի գավառի հյուսիսային գյուղերի բնակչությունը՝ մոտ 40 հազ. մարդ, գաղթեց ունակի Բակուրիան, իսկ հարավայինը՝ 30-35 հազ. մարդ, իհմնականում Շալկա՝ տեղում թողնելով իր ամբողջ շարժական գույքը: Այսպես մինչև մայիսի վերջը արտագաղթեց ամբողջ Ախալքալաք քաղաքի և 61 հայկական գյուղերի բնակչությունը[5]:

Գաղթի ճամփան բռնեց 70-80 հազ. մարդ, որոնցից շատերը, անկուր տառապանքների ենթակվելով, կոտորվեցին սովոր, հիվանդությունների ու ցուլտ եղանակի պատճառով: Եվ հետագայում, երբ թույլատրվեց նրանց վերադարձը հայրենի օջախներ, շատ քերին հաջողվեց վերադառնալ թուրքերի կողմից ավերված ու թալանված իրենց բնակավայրերը:

Այդ օրերին «Հորիզոն» թերթը, նկարագրելով գաղթականների վիճակը, գրում էր. «Խուսափելով թշնամու սրից՝ մեր ժողովուրդը փախչելիս անշուշտ չէր մտածում, թե իրեն ավելի վատթար մահ է սպասում, քան մահը՝ հրացանը ձեռքին՝ թշնամուն դիմագրավելիս. Նա փախչում էր, ազատում իր ընտանիքը, որպեսզի այդ նույն ընտանիքը կոտորի սովոր և հիվանդություններից»[6]:

Գաղթականների ժամբ կացությունը բնականաբար չէր կարող չգրավել Թիֆլիսում գործող հայկական միությունների, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության և այլ կազմակերպությունների ուշադրությունը, որոնք, տեսմելով գաղթականներին սպառնացող բազում վտանգները, փորձեցին ինչ-որ կերպ, ով ինչպես կարող էր, օգնել Ախալքալաքի գաղթականներին:

Գաղթականներին օգնություն ցույց տալու, ինչպես նաև նրանց սովոր ու բնաջնջումից փրկելու նպատակով Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի աջակցությամբ թիֆլիսաբնակ ջավախքցիններից կազմակերպվեց «Ախալքալաքի Հայությաց միություն», որի վարչության մեջ մտան 10 հոգի, այդ թվում ճանաչված հասարակական գործիչներ Պ. Աբեյյանը /քարտուղար/, Բ. Օհանջանյանը /նախագահ/, Գր. Պապոյանը /տեղակալ/, Հովհ. Մալխասյանը, Զ. Տեր-Գրիգորյանը, Կ. Չահապոյնյանը: Վարչությունը կոչով դիմեց Թիֆլիսի հայությանը և կարողացավ որոշակի միջոցներ հանգանակել գաղթականների համար[7]:

Մինչև ստեղծված դժվարին պայմաններում Թիֆլիսում գործող հայկական միությունները կվարողանային միջոցներ հայրայթել գաղթականներին օգնելու համար, նրանց վիճակը օր օրի ավելի ու ավելի էր ծանրանում:

«Հորիզոն» թերթի թղթակիցը Բակուրիանից 1918 թ. հուլիսի 18-ին հաղորդում էր, որ գաղթականները մատնված էին կատարյալ սովոր: Գաղթականական կոմիտեն բաժանում էր լորի, հաց բույրուղին չկար: Ճատերը 10 օրով հացի երես չէին տեսնում և կատարելապես հյուծվել էին: Երեխանները սովոր մերնում էին: Ընդհանրապես սովամահության դեպքերը սովորական երևույթ էին դարձել: Մրա վրա պիտի ավելացնել և այն, որ գաղթականներից ավագակմերդ խում էին անասունները և կողոպսում նրանց ունեցած դրամը, հանում հագուստունները[8]: Նարդիկան և Այզմա գյուղերի լեռների թուրք հրոսակախմբերը՝ իջնելով լեռներից, բռնի ուժով հակիշտակում էին գաղթական-

## ՄԵՐԻԴ ՄԱՆԵՐԻ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Աերի ունեցած վերջին եզն ու կովը, իսկ իրենց ունեցած շորերը, կարպետները, հրացանները այն ամենը, ինչը կարելի էր փոխանակել, թիսած հացով փոխարինել էին հոյս գյուղացիների հետ և ոչինչ չեր մնացել վաճառելու և հաց ձեռք բերելու համար[9]:

Ախալքալաքի գավառի բնակչության մեծագույն մասի հետ Բակուրիանում էին նաև ավելի առաջ Կարսի Շրջանի գանազան մասերից /Արդահանից, Արդանուցի և Արդվինի կողմերից/ Ախալքալաք փախած գաղթականությունը: Մրանք, բացի մազրացիները, դեռ մինչև Ախալքալաք գալը ամեն բանից գրկված լինելով, եկել հասել են այստեղ, գրեթե մերկ ու բորիկ, առանց որևէ պաշարի: Ինչ վերաբերում է ախալքալաքցիներին, նրանց մեծագույն մասը կարողացել էր ազատել իր անասունները, իր տան արժեքավոր իրերը և ամենազիստավորը՝ բերել էր իր հետ որոշ քանակությամբ հաց: Սակայն սրանց մեջ էլ քիչ չեն այնպիսիները, որոնք, լժկան կամ սայլ չունենալով /քաղաքացիք, աղքատ գյուղացիք/, կամ գաղթի ճանապարհին ենթարկվելով տաճիկների հարձակման և թողնելով իրենց անասուններն ու սայլերը, Բակուրիանի էին հասել նույնպես առանց որևէ պաշարի: Այս վիճակի մեջ էին նույնպես հունիսի 23-ին տեղ հասած Ախալքալաքում տաճիկների կողմից գերվածները, թվով՝ մոտ 1100 հոգի[10]:

Դրույթունը օրեցօր ավելի անտանելի էր դարձնում գաղթականների համար, անհրաժեշտ էր ձեռք առնել անհապաղ միջոցներ՝ նրանց սովոր ու թուրք իրուսակախմբերից փրկելու ուղղությամբ: Ախալքալաքի Հայրենակցության Վարչությունը 1918 թ. սեպտեմբերի 13-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին հաղորդում էր հետևյալը. «1. Ախալքալաքցիների գաղթից հետո այս երեք ամսվա ընթացքում Բակուրիանում և Ծալկայում ապաստանած փախստականները գլխավորապես սահմանի այն կողմից եկած տարրերի, գյուղացիների ասելով համարյա բացառապես տաճկական ասկյարներից բաղկացած հրոսակախմբերի կողմից ենթարկվել են պես-պես և մեծամեծ գրկանքների, որոնց հետևանքը են եղել բազմաթիվ մարդկանց կոտորած, կամանց բռնաբարում, տասնյակ հազարներով անասունների կորուստ, հազարավոր փթերով հացի և անհաշիկ իրերի թաքան: Որովհետև այդ վայրերում մենք չենք ունեցել մարմիններ, որոնք արձանագրեին փախստականների գլխին թափվող դժբախսությունները և այդպիսով Զեզ հնարավորություն տային պաշտպանելու Ախալքալաքցիների շահերը, ուստի փախստականներին բաժին հասած սարսափ-ներից շատ քչերն են պատահմամբ Զեզ հասել: Զեզ օգոստոսի 13-ին և Գաղթ. Գլխ. Խորհրդին նոյն ամսի 11-ին ներկայացրած ծրագրի մեջ Ախալքալաքի Հայրենակցության Վարչությունը խնդրում էր կազմակերպել մի այնպիսի մարմին, որի նպաստավոր լինի տեղերում արձանագրել և վավերաթերերի վերածել փախստականների կյանքում տեղի ունեցող վերոհիշյալ կարգի երևույթները: Մինչև այժմ այդպիսի մարմին դեռևս գոյություն չունի Բակուրիանում և Ծալկայում: Այդ գործը, Վարչության կարծիքով, պետք է կազմեր Գաղթ. Գլխ. Խորհրդի կարևորագույն պարտականություններից մեկը, բայց, ըստ երևույթին, այդ մարմինը ոչ ինքը, ոչ էլ նրա լիազօրները առանձին նշանակություն չեն տվել փախստականներին վարչական օգնություն ցույց տալու խնդրին»:

Նկատի ունենալով այս ամենը՝ Ախալքալաքի Հայրենակցության Վարչությունը խնդրում է Զեզ կարգադրել, որևէ մարմին պարտավոր լինի հիշյալ վայրերում արձանագրել այն գրկանքները, որոնց փախստականները ենթարկվել են մինչև այժմ և կարող են ենթարկվել այսուհետև:

2. Ինչպես երևում է այսօրվա թերթերում Զեզ կարգադրությամբ լույս տեսած տեղեկությունից՝ Տաճկական կառավարությունը իրու արգելք բոլոր փախստականների վերադարձի դեմ բերում է այն հանգամանքը, որ «անցյալում տեղի ունցած թյուրիմացութ-

## ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

յունների հողի վրա հնարավոր կարող են լինել անկարգություններ հայ և մահմեդական ժողովուրդների միջև։ Զեզ և Գաղթ Գլխ. Խորհրդին ներկայացված հիշյալ ծրագրի, ինչպես և Արդուլ-Քերիմ փաշային ամսի 9-ին ներկայացված գրության, այլև Գերմանական, Վիրական կառավարություններին և այլուր տրված թղթերի մեջ թե Վարչությունն և թե փախստականների բազմաթիվ ներկայացուցիչները պնդել ենք և պնդում ենք, որ, եթե Տաճկական կառավարությունը ինքը դեմ չէ վերադարձն, հնարավոր է և անհրաժեշտ է, գոնե Ախալքալաքի գավառում, հաշտեցնել և առաջվա նման բարեկանացնել հայ և թուրք ժողովուրդներին, իբրև այդպիսիններին։ Վարչությունս խնդրում է Զեզ հայտնել այս մասին Տաճկական կառավարության և նրա Անդրկովկասյան ներկայացուցիչներին»[1]:

Ի պատասխան սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին Հայաստանի կառավարության, Ախալքալաքի Հայրենյաց վարչության /միության/ բողոք-դիմումներին՝ գաղթականներին կամ Վրաստան անցնելու, կամ Ախալքալաք վերադառնալու թույլտվության արտոննան մասին, հոկտեմբերի 4-ին Վրացական կառավարության պետ Կոժուխովը Հայոց գիլավոր գաղթականական խորհրդին պաշտոնական գրությամբ ցինիկորեն հայտնեց, որ Վրաստանում ստեղծվել է պարենային ճգնաժամ, իսկ թուրքական հրամանատարությունը հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի հայությանը վերադառնալ հայրենիք, ուստի վրաց իշխանությունները առաջարկում են ամենակարծ ժամանակամիջոցում գաղթականությանը տեղափոխել Հյուսիսային Կովկաս կամ Հայաստանի Հանրապետություն[2]:

Գաղթականության հոգսերի ողջ ծանրությունը մնաց Հայոց գաղթականական խորհրդի, Ախալքալաքի Հայրենյաց վարչության, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Վրաստանում Ամերիկյան առաքելության, մասսամբ նաև Վիրահայոց Ազգային խորհրդի, Հայաստանի ներկայացուցիչ Ա. Զամայյանի ուսերի վրա [13]: Վերջինս գաղթականներին օգնություն ցույց տալու գործում մեծ աշխատանք կատարեց։

Ներևս 1918թ. հուլիսի 25-ին, երբ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Զամայյանը իր առաջին այցելությունն էր կատարել Վրաստանի ներքին գործերի մինիստր Ն. Ռամիշվիլու մոտ, հայտնել էր, որ ինքը, բացի գուտ ընդհանուր դիվանագիտական հարաբերությունից, Հայոց կառավարության կողմից հրաման է ստացել, որ հաստկապես ուշադրություն դարձնի գաղթականության ծանր խնդրին[14]:

1918 թ. սեպտեմբերի 11-ին Վրաստանում հայկական դիվանագիտական առաքելության տեղեկատու բյուրոն հաղորդում էր հետևյալը. «Երեկ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Զամայյանը իր քարտու-դարի ուղեկցությամբ փոխ այցելություն տվեց օսմանյան պետության ներկայացուցիչ Արդուլ-Քերիմ փաշային։ Այցելության միջոցին խոսք բացվեց գաղթականների վերադարձի մասին։ Արդուլ-Քերիմ փաշան այդ առթիվ հայտնեց, թե ինքը իսկապես զգում է, որ հայ-թուրքական հարաբերությունները կանոնավորելու և երկու ժողովուրդների միջև մերձեցում առաջ բերելու համար անհրաժեշտ է գաղթականների վերադարձը թույլատրել, և նա իր շրջանում գտնված գաղթականներին, մասնավորապես ախալքալաքին վերադարձնելու համար քայլեր է արել Էսսադ-փաշայի մոտ։ Վերջինս խոստացել է մի քանի օրից վերջնական պատասխան տալ այդ մասին։

Արդուլ-Քերիմ փաշան անձնապես նպատակահարմար է համարում, որ առաջին հերթին վերադառնան կանայք, երեխանները և ծեր տղամարդիկ, որպեսզի էքսցեսեր չպատահեն տեղական թուրք բնակչության հետ։ Դրան այ. Զամայյանը պատասխանել է, որ այդ միջոցը աննպատակահարմար է երկու տեսակետից՝ նախ, եթե տղամարդ-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

կանց բաժանենք կանանցից և երեխաներից, վերջիններս չեն վերադառնա իրենց տեղերը, և երկրորդ՝ առանց տղամարդկանց նրանք չեն կարող հավաքել հունձը, որ այնքան կարևոր է այդ գաղթականության գոյության համար: Աբրուվ-Քերիմ փաշան հայտնում է, որ վերադարձի խնդիրը վերջնականապես որոշելուց հետո կարելի կլինի տեխնիկական դժվարությունները հարթել և հույս է հայտնում, որ նման խնդիրները բարեկամաբար կարգավորելով՝ կարելի կլինի երկու դարավոր հարկան ժողովուրդների մեջ առաջ բերել այս մերձեցումը, որ այնքան անհրաժեշտ է երկու կողմերի համար էլ»[15]:

Թուրքերի դիրքորոշումը գաղթականների վերադարձի հարցում արտահայտել է Էնվեր փաշան Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակությանը՝ ասելով. «Արտաքին նկատումները մեզ թույլ չեն տար, որ ազատութիւն տանք գաղթականներուն վերադառնալու մեր գրաւած շրջանները. տեղական մահմետականները չեն ուզեր զանոնք տեսնել. Ես չեմ կրնար երաշխաւորել անոնց կեանքը: Թող անցնի ժամանակ մը. հանգամանքները թերեւս կը փոխուինչ»[16]:

Իսկ հանգամանքները փոխվեցին պատերազմում Թուրքիայի պարտությամբ ու 1918թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի գինադարտով, որով թուրքերը պարտավորվում էին իրենց գորքերը դուրս բերել Անդրկովկասում գրաված տարածքներից՝ նաև Ախալքալաքից: Իսկ դա նշանակում էր, որ գաղթականները, չվախենալով թուրքերից, կարող էին վերադառնալ իրենց բնակավայրերը:

Սակայն մինչև սուս վերադառնալը՝ 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգիսի շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքի գաղթականների կորուստները հասան 40 հազարի[17]:

Այս մասին է վկայում նաև Ախալքալաքի Հայրենակցական միության դիմումը Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Զամայանին, որուել վարչությունը նկարագրում էր այն ամստանելի դրությունը, որի մեջ հայտնվել էին գավառի փախստականները: Նրանք մեկ անգամ ևս շեշտում էին, որ Ծալկայում և Բակուրիանում ապաստանած գաղթականները արագ կերպով բնաջինը էին լինում: Ախալքալաքի հայ բնակչության 80.000-ի հասնող թիվը նվազել էր և հասել մոտ 50.000-ի: Սաստկացող սովին և հիվանդություններին, մանավանդ Բակուրիանում, ավելացել էր նաև եղանակի խստությունը: Սահացումը ահրելի չափեր էր ստացել և քանի գնում աճում էր: Բոլոր փախստականներն իրենց համարում էին մահվան թեկնածուներ: Բակուրիանը և Ծալկան ախալքալաքիների համար դարձել էին մահվան ամևյուններ: Իր թվի համարյա մի երրորդը կորցրած և իր մնացորդների անխուսափելի ոչնչացումը դիտող փախստականությունը գտնվում էր շշմած և խելակորույս դրության մեջ: Մահվան դատապարտվածները ջղաձգյին շարժումներ էին անում իրենց ճարակող մահվանց ազատվելու համար: Կարճ հրապես և ամեն օր, ամեն ժամ բնաջինը եղող փախստականները և՝ աղերսում և՝ պահանջում էին, որ մարդիկ իրենց մի կերպ ազատեն մահվան ճանկերից[18]:

Ախալքալաքի Հայրենակցական Վարչությունը գտնում էր, որ Բակուրիանում և Ծալկայում դեգերող հայ փախստականության փրկության համար շուտափույթ անհրաժեշտ էր լուծել հետևյալ հարցերը:

1. «Բաքուրիանի փախստականներին աեստք է այս օրերս տեղափոխել մի փոքր ի շատէ հարմար վայր: Զներն այդտեղ համարյա հասել է: Եթէ փախստականները շուտով Բաքուրիանից չհանվեն, նրանք այնտեղ կկոտորվեն ցրտից և մի երկու շաբաթից

## **ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015**

Իետո ճանապարհների փակման պատճառով անկարող կյինեն այնտեղից հանել իրենց անասունները և սայլերը: Այս ամենը անհետաձգելի կարիքն է, որին անհրաժեշտ է հապճեպորեն բավարարություն տալ:

2. Պետք է լուծել սանդի հարցը: Ժողովուրդը ոչնչանում է գլխավորապես սովոր: Սակավաթիվ ունաորների համար վարձատրությամբ և չունաորների համար անվարձ որոշեղից հարմար է և հնարավոր, պետք է հաց գտնել:

3. Անհրաժեշտ է փրկել անասունները: Գյուղացոց ունեցած անասունների հազիվ մի քառորդն է մնացել: Եթե այդ էլ կորչի, փախստականները հայրենիք վերադառնուլու դեպքում անկարող կյինեն վերականգնել իրենց տնտեսությունը: Գյուղացիներին հայրենիքի մոտ պահողը և նրանց մեջ իրենց օջախը վերադառնուլու ցանկությունը վար պահողը գլխավորապես անասուններն են, ուստի այժմվանից պետք է հոգալ անասունների համար կեր և ախորներ ունենալու մասին: Կարիքը հաճախ հարկադրում է գյուղացիներին ծախսել իրենց անասունները: Սպեկույանուների ծեռքերից այդպիսի դեպքերում նրանք ազատելու համար շատ ցանկալի է, որ փախստականական նարմինները այդ գործը վերցնեն իրենց վրա: Նույնպես ցանկալի է, որ Փախստականական Մարմինները անհրաժեշտության պարագայում իրենք գնեն անասունները և պահեն, ապագայում գյուղացիներին օգնելու համար:

4. Անհրաժեշտ է ցուցակագրել բոլոր որերին, անօգնական կանանց և ծերերին համապատասխան օգնություն ցույց տալու համար:

5. Հիվանդանոցների, ինչպես և սանդառությունների և այլ նույնանման հիմնարկությունների քանակը և որակը պետք է համապատասխանեն բնակչության կարիքներին:

6. Փախստականության աշխատունակ տարրերի համար անհրաժեշտ է գտնել գործ, կազմակերպել աշխատանոցներ և աշխատանքներ: Այդ տեսակետից նպատակահարմար է փախստականությունը այնպիսի վայրերում պահել, որտեղ նա իր անասուններով կարող է գործ ունենալ, ինչպես օրինակ եթե կաթնասուր անասուններ ունեցող որոշ քանակությամբ գաղթականներ հնարավոր լինի թիֆլիսի մոտ տեղավորել, նրանք կվարողանան իրենց ազնիվ աշխատանքով ապրել միմանք վերադարձի հարցի լուծումը:

7. Պետք է միջոցներ ծեռք առնել, որ տեղերում գործող գաղթականական նարմինների գործունեությունը կանոնավոր հիմքերի վրա դրվի և գտնվի մշտական օրինական հսկողության տակ:

8. Ինչպես և այդ մասին օրերու Վիրահայ Ազգային խորհրդին խնդրել է Հայրենակցության Վարչությունը, գաղթականության դրության մոտից ծանոթանալու և տեղերում գործող գաղթականական հիմնարկությունների դեմ եղած ընդհանուր դժգոհությունների հիմնավոր կամ անհիմն լինելը պարզելու նպատակով հայրենակցության մերկայացուցչի մասնակցությամբ ամհրաժեշտ է ուղարկել Բակուրիան և Շալկա համապատասխան հանձնաժողով:

9. Ուր և տարվեն փախստականները պետք է միջոցներ ծեռք առնվին, որ նրանք չենքարկեն զանազան բռնությունների: Առհասարակ անհրաժեշտ է փախստականության ցույց տալ վարչական օգնություն: Առանձնապես կարիք է զգացվում, որ փախստականության վերաբերմամբ գործ դրված զանազան տեսակի բռնությունները մի պատշաճ մարմնի կողմից արձանագրվեն, որպեսզի տուժողների շահերը հնարավոր լինի պաշտպանել Ձեր միջոցով: Այս մասին Վարչությունս մի քանի ժամանակ առաջ խնդրել է ձեզ կարգադրություն անել:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

10. Փախստականության տեղաշարժման և Վրաստանի սահմաններում հաց գնելու դեմ եղած սահմանափակումները անելանելի կացություն են ստեղծում ժողովրդի համար, ուստի անհրաժեշտ է այդ սահմանափակումները վերացնել և ազատ տեղաշարժման իրավունք ստանալ ինչպես Վրաստանի, այնպես էլ մյուս պետությունների սահմաններում:

11. Թեև փախստականության վրկության հետ ամմիջական կապ չունի այս, բայց անհրաժեշտ է ժողովրդին օգնել խնայողական խանութեր բանալով, որտեղից ժողովուրդը կարողանար արքով իր համար պետքական իրերը գնել: Նույնպես կարիք կա հոգալու մասուկ սերնդի կրթության մասին:

12. Բնականարար, փախստականության համար ամենամեծ հարցը հայրենիք վերադառնալու խնդիրն է, որը չնայած ծեր բոլոր ջանքերին և հայրենակցության ու փախստականների ներկայացուցիչների բազմաթիվ դիմումներին, մինչև այժմ անորոշ վիճակի մեջ է գտնվում: Այդ հարցի դրական լուծման պայմաններ փախստականությունը համարում է պատվի, գույքի, ապրուստի և սերմացուի ապահովությունը»[19]:

Սակայն Ախալքալաքի Հայրենակցական Վարչության անդամները հասկանում էին, որ հայության համար կենսական նշանակություն ունեցող այս խնդրին լուծում տալը շատ լուրջ դժվարությունների հետ էր կապված, ուստի Հայրենակցական Վարչությունն ու Բակուրիանի գաղթականության թիֆլիսում գտնվող ներկայացուցիչները խնդրում էին Վրաստանում Հայաստանի դիվ. ներկայացուցչին՝ հրավիրել փախստականության դրության ու նրան հարկավոր օգնություն ցույց տալու գործը կազմակերպելու նպատակով մի խորհրդակցություն, որին կմասնակցեին Վիրահայ Ազգային խորհրդի, Գաղթականական Գլխավոր խորհրդի, Հայրենակցությունների Միության խորհրդի, Ախալքալաքի Հայրենակցության Վարչության և Բակուրիանի գաղթականության թիֆլիսում գտնվող ներկայացուցիչները:

Եշշուում էին նաև, որ հայկական հիմնարկությունները և Հայոց կառավարությունը մենակ անկարող էին լուծել որոշ հարցեր առանց օստար պետությունների աջակցության: Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը և այն, որ կորչող գաղթականությունը առանձնապես համոզված էր, որ իր վրկության գործը չի կարող գույն գալ առանց օտար պետությունների աջակցության՝ խնդրում էին դիվ. ներկայացուցիչ Ա. Զամայյանին հայկական հիմնարկությունների խորհրդակցությունից անմիջապես հետո հրավիրել մի այլ խորհրդակցություն՝ մասնակցությամբ հայկական այդ հիմնարկությունների և գերմանական, ավստրիական գաղթական տաճկական, վրաց, Ասորապատականի, ռուսական, ուկրաինական կառավարությունների և չեզոք պետությունների թիֆլիսում գտնվող, ինչպես և ամերիկական ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ: Խնդրում էին հիշյալ պետությունների և կազմակերպությունների քննությանը դնել այն հարցը, թե որ պետությունը ինչով կարող էր օգնել փախստականներին կորստից ազատելու գործում:

Կորչող փախստականությունը իր հուսահատ վիճակի մեջ թույլ հույս էր տածում, որ այս ձանապարհով գնալով կարելի կիմներ կանգնեցնել նրա քննօնքումը»[20]:

Եկ եթե նկատի ունենանք, որ Բակուրիանում արդեն սեպտեմբերից սաստիկ ցուրտ է, ամբողջական պատկերը պարզ կիմնի, բերենք ժամանակի մամուլում 1918 թ. հոկտեմբերի 9-ին տպագրված մի օրինակ. «Այստեղ սկսվեցին սաստիկ ցուրտը, սառնամանիքը, եղյամը և ծյունախառն ցրտաշունչ անձրևները: Եթեխաները և ծերերը կոտորվում են ցրտից: Այժմ գաղթականն այլևս ոչինչ չունի վաճառքի դնելու: Մեղական գաղթականական կոմիտեն իր մի քանի ֆուն լորի և կարտոֆիլ բաժանելով, սովորացնելով չի կարող առնել: Զավախիքի գաղթականների մնացած բեկորներն ևս դատա-

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

պարտված են կոտորվելու և այն ժամանակ, իսազ պետք է քաշել Բակուրիանում ապրողների վրա: Սովոր ստիպել է գաղթականներին դուրս գալու այստեղից և գնալու Բորժոմի ուղղությամբ, անտառում ուտելու որևէ վայրենի պատու սովոր չմերնելու համար:

Այդ թշվարների վիճակը ծանրանում է նրանով, որ ոչ մի տեղից հաց գնել կամ բերել չեն կարող թե թանգութեան և թէ իշխանութեան արգելքների շնորհիվ»[21]:

1918 թ. աշնանը վրացիների կողմից գաղթականների համար նախատեսված «կենտրոնացման բանակատեղիներում» և մասնավորապես Բակուրիանի շրջանում, որտեղ արգելափակված էին ախալքալարցի գաղթականները, դրույթունն այնքան էր ծանրացել, որ վերջիններս որոշել էին վերադառնալ իրենց տները, նաև թուրքերի ծերքով կոտորվելու պայմանով: Հայաստանի կառավարությունը, տեղեկանալով գաղթականների այս մտադրության մասին, արտաքին գործերի նախարարի միջոցով հետևյալ ծանուցագիրն էր հանձնել Վրաստանի ներկայացուցչին Երևանում:

«Ախալքալարցի գաղթականների ծանր վիճակն աննկարագրելի է: Թախանձագին խնդրում են չմերժել, նեցուկ հանդիսանալ իմ դիմումին, որ հեռագրով հաղորդել են վրաց կառավարությանը մեր դիմանագիտական ներկայացուցչի միջոցով՝ խնդրելով վերացնել այն կարգադրությունները, որոնք արգելք են համարանում, որպեսզի հիշյալ գաղթականները ժամանակավորապես տեղավորվեն իրենց այժմյա բնակավայրին մոտ գտնված հայկական գյուղերում»:

Այս ժանուցագիրը հեռագրելով իր կառավարությանը՝ Վրաստանի ներկայացուցչը իր կողմից էլ եռանդագին խնդրում էր չմերժել Հայաստանի կառավարության առաջարկը:

Սակայն, Վրաստանի կառավարությունը մնաց անհողող իր քաղաքականության մեջ: Նա արգելափակ պահեց Ախալքալարի հայ գաղթականներին մինչև այն օրը, երբ թուրքերը հեռացան նրանց գավարից և այդ գաղթականները՝ թվով կիսված և նյութապես ու ֆիզիկապես իսպառ քայլքայված վերադառնալ իրենց տները: Այդ օրն էլ վրաց կառավարությունը հիշեց, որ ախալքալարցիք Վրաստանի քաղաքացիների թվին են պատկանում, և նրանց հետևից կրնկակոյն մտավ Ախալքալար՝ իր «քաղաքացիների» ապահովության և նրանց հրավունքները պաշտպանելու համար»[22]:

Անփոփելով գաղթականների դեգերումները Բակուրիանի ու Ծալկայի լեռներում ու նրանց մասնակի վերադառնաց իրենց բնակավայրերը ցավով պետք է նշենք Վրաստանի կառավարության բացասական, քաղաքականացված վերաբերմունքը դեպի գաղթականությունը, որը նպաստեց գաղթականների այլշափ կոտորածին: Նախ Վրաստանի կառավարությունը նրանց տեղավորում էր այնպիսի վայրերում, որտեղ բնակվելու, էլ չենք ասում թիշ թե շատ մարդուն վայել կերպով ապրելու համար ամենավատ պայմաններն անգամ բացակայում էին: Թիֆլիսում գործող Հայաստանի ներկայացուցչությունը ամեն կերպ փորձում էր խնդրով հետաքրքրվող հայկական կազմակերպությունների, միությունների, նաև Վրաստանի կառավարության ուշադրությունը հրավիրել նրանց ծանր վիճակի վրա, ճիշտ է, նրանք կարողացան որոշակի միջոցներով օգնության ձեռք մեկնել հայ գաղթականներին, բայց փրկել նրանց մասսայական կոտորածից չհաջողվեց: Դա թույլ չէին տալիս և՝ վրացական իշխանությունները, և թուրքերը: Սուեդիած ծանր դրույթունը չկարողացավ փրկել նաև Հայաստանի առաջին հանրապետությունը, որն իր գոյատևման առաջին տարում «կռվի էր բռնվել» իրեն բաժին հասած դժվարությունների հետ. Երկիրը լիբն էր գաղթականներով, հիվանդությունները իրենց սև գործն էին անում, պարենի սուր ճգնաժամ էր, հանրապետությունում մոլեգնում էին հիվանդությունները և այլն:

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՅԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015**

Մյուս, թերևս ամենակարևոր խնդիրն էլ այն էր, որն ուղղակի թույլ չէր տալիս Հայաստանի առաջին հանրապետությանը հնարավորինս օգնության ձեռք մեկնելու Ախալքալաքի գաղթականներին, Հայաստանի և Վրաստանի միջև տարածքային տարածայնությունների հարցն էր, որը 1918 թ. հոկտեմբերի կեսերից ավելի էր սրբել, և դեկտեմբերին վերածվեց պատերազմի:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «Աշխատավոր», 1918, 24 օգոստոսի, թիվ 115.
2. «Հորիզոն», 1918, 21 սեպտեմբերի, թիվ 191:
3. Տե՛ս Ա. Մելքոնյան Զավախըքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 273.
4. Տե՛ս Ա. Մելքոնյան, նշվ.աշխ., էջ 276:
5. Տե՛ս նույն տեղում, էջ 281-282:
6. «Հորիզոն», 1918, 31 օգոստոսի, թիվ 173:
7. Ա. Մելքոնյան, նշվ.աշխ., էջ 291:
8. Տե՛ս «Հորիզոն», 1918, 24 հուլիսի, թիվ 145:
9. Տե՛ս «Հորիզոն», 1918, 21 օգոստոսի, թիվ 165:
10. «Հորիզոն», 1918, 18 հուլիսի, թիվ 141:
- 11.ՀԱԱ, Ֆ. Պ-275, գ. 5, գ.14, թ. 28:
- 12.Տե՛ս Ա.Մելքոնյան, նշվ.աշխ., էջ 292:
- 13.Տե՛ս նույն տեղում, էջ 294:
- 14.«Հորիզոն», 1918, 28 հուլիսի, թիվ 148:
- 15.«Հորիզոն», 1918, 11 սեպտեմբերի, թիվ 182:
- 16.Տե՛ս Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 101-102:
- 17.Տե՛ս Ա. Մելքոնյան, նշվ.աշխ., էջ 294:
- 18.ՀԱԱ, Ֆ.Պ - 275, գ. 5, գ. 14, թ. 46:
- 19.ՀԱԱ, Ֆ.Պ - 275, գ. 5, գ.14, թ. 45-46:
- 20.ՀԱԱ, Ֆ.Պ- 275, գ. 5, գ.14, թ. 46:
- 21.«Աշխատավոր», 1918 , 9 հոկտեմբերի, թիվ 151
- 22.Զամայյան Արշակ, Հայ-Վրացական կնճիռը, Եր., 2011, էջ 106

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Ախալքալաքի գաղթականության դրությունը 1918 թ. Վերջերին և Վրաստանում  
Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը  
Արտակ Ղազարյան**

Ախալքալաքի գավառից, որը գրավված էր օսմանյան-թուրքական զորքերի կողմից, 1918 թ. կեսերին Ծալկայի և Բակուրիհանի շրջաններ հասան մոտ 80.000 գաղթականներ: Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը բազմիցս հանդիպումներ ունեցավ Վրաստանի կառավարող շրջանների հետ՝ ձգտելով թեթևացնել փախստականների ծանր դրությունը: Սակայն Վրաստանը էական օգնություն չցու-

## **ՄԵՄՈԴ ՄԱՀԾՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015**

ցաբերեց հայ գաղթականներին, և, մինչև տուն վերադարձի պահը, ավելի քան 40 հազար մարդ զոհվեց:

**Բանալի բառեր՝ դիվանագիտական ներկայացուցիչ, Հայաստան, գաղթական, Վրաստան, Բակուրիան, Ծալկա, Ախալկալակ, Թիֆլիս, Հայրենակցական միություն, անկախություն, հանրապետություն:**

### **РЕЗЮМЕ**

#### **Положение беженцев Ахалкалака в конце 1918 г. и Армянское дипломатическое представительство в Грузии Артак Казарян**

Армяне Ахалкалака 1918 году столкнулись с огромными трудностями. Из Ахалкалакской области, занятой османскими войсками в середине 1918 г., в Цалкинские и Бакурианские регионы прибыли около 80.000 беженцев. Армянский дипломатический представитель в Грузии много раз встречался с правящими кругами и пытался облегчить тяжелое положение беженцев. Но Грузия не оказала значительной помощи беженцам и до момента возвращения домой погибло более 40 тысяч человек.

**Ключевые слова:** дипломатический представитель, Армения, иммигрант, Грузия, Бакуриани, Цалка, Ахалкалаки, Тбилиси, Патриотический союз, независимость, республика.

### **SUMMARY**

#### **The Status of the Emigrants from Ahalkalak at the end of 1918 and the Armeian Diplomatic Mission in Georgia Artak Ghazaryan**

Ahalkalak Armenians faced difficult challenges in 1918. About 80.000 Armenians had to migrate to the regions of Tslaka and Bakurain in mid 1918 from Ahalkalak region which was occupied by Ottoman troops. The diplomatic representative of Armenia in Georgia had several meetings with Georgian governing circles trying to relieve the plight of the refugees. But there was lack of assistance by Georgia, so more than 40.000 people died on their way back home.

**Keywords:** diplomatic representatives, Armenia, an immigrant, Georgia, Bakuriani, Tsalka, Akhalkalaki, Tbilisi, the Patriotic Union, independence, republic.